



ԼԵՌՆԱՅԻՆ ԳԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ձ Ե Կ ՈՒ Յ Ց

ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԳՐՈՒՄՆԵՐԻ
ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

Դեկտեմբեր 2010թ.

Թողարկման պատասխանատուներ՝

ԼՂՀ վիճակագրության
պետական խորհրդի անդամ
Է. Բաբուրյան

ԼՂՀ ԱՎԾ նախագահի տեղակալ
Կ. Առուշանյան

ԼՂՀ ԱՎԾ ՀՍ բաժնի պետ
Ի. Մելքումյան

ԼՂՀ ԱՎԾ ՆԱԾՎ բաժնի պետ
Լ. Սողոմոնյան

Հեռախոս՝ 94-33-72

Էլեկտրոնային փոստ՝ artsakhstat@karabakh.net

Ինտերնետի էջ www.stat-nkr.am

Թուղթ օֆսեթ 1: Չափսերը՝ 21x29,7: Տպաքանակը 50 օրինակ:
Հանձնված է տպագրության 21.12.2010թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
2. ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ-ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ	5
3. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՆԿԱՐԱԳԻՐԸ	8
4. ԴԻՏԱՐԿՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ	9
5. ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄԸ	10
6. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ	11
6.1. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՉԱՓԵՐԸ	11
6.2. ՄԻԿՐՈԱՎՏՈՔՈՒՄՆԵՐԻ ՇԱՐԺԱԿԱԶՄԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ	14
6.3 ԱՎՏՈՔՈՒՄՆԵՐԻ ՇԱՐԺԱԿԱԶՄԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ	16
6.4 ՄԻԿՐՈԱՎՏՈՔՈՒՄԱՅԻՆ ԵՐԹՈՒՂԻՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ	18
6.5 ԱՎՏՈՔՈՒՄԱՅԻՆ ԵՐԹՈՒՂԻՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ	23
6.6 ԿԱՏԱՐՎԱԾ ԵՐԹՈՒՂԻՆԵՐԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ	26
6.7 ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ ԵՎ ՈՒՂԵՎՈՐԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ	28
6.8 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՇԵՂՈՒՄՆԵՐԸ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՉՎԱՑՈՒՑԱԿՆԵՐԻՑ	32
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	35
ՀԱՎԵԼՎԱԾ 1 (ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՂՅՈՒՄԱԿՆԵՐ)	38
ՀԱՎԵԼՎԱԾ 2 (ԵՐԹՈՒՂԻՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՂՅՈՒՄԱԿՆԵՐ)	57
ՀԱՎԵԼՎԱԾ 3 (ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԵՐԹՈՒՂԻՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՂՅՈՒՄԱԿՆԵՐ)	96
ՀԱՎԵԼՎԱԾ 4 (ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹԵՐ)	104

Ծանոթագրություն՝ Առանձին դեպքերում բաղադրիչների գումարի և արդյունքի միջև աննշան տարբերությունները բացատրվում են տվյալների կլորացմամբ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2010 թվականի նոյեմբերին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության (ԼՂՀ ԱՎԾ) կողմից անց է կացվել ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորափոխադրումներ իրականացնող տնտեսավարող սուբյեկտների և նրանց պատկանող՝ համապատասխան երթուղիները սպասարկող տրանսպորտային միջոցների (միկրոավտոբուս և ավտոբուս) հետազոտություն:

Հետազոտության նպատակն էր ուսումնասիրել և ընդլայնել ավտոմոբիլային տրանսպորտի վիճակագրության վարման համար անհրաժեշտ ցուցանիշների կազմն ու բովանդակությունը, ինչպես նաև կատարելագործել այդ ցուցանիշների հաշվարկման գործիքակազմն ու մեթոդաբանությունը: Սույն հետազոտությունը ԼՂՀ ԱՎԾ կողմից իրականացվում է երրորդ անգամ, ինչն էլ հնարավորություն է տալիս դիտարկել առանձին ցուցանիշների դինամիկան:

Ընտրանքային հետազոտության մեջ ընդգրկվել են ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորափոխադրումներ իրականացնող թվով 17 կազմակերպություն և 6 անհատ ձեռնարկատեր:

Հետազոտությունն իրականացվել է երթուղիները սպասարկող ավտոտրանսպորտային կազմակերպությունների կողմից հետազոտության հարցաթերթի լրացման և այդ երթուղիներում գործող ավտոտրանսպորտային միջոցների (միկրոավտոբուս և ավտոբուս)՝ հարցազրուցավարների կողմից անմիջական դիտարկման եղանակով:

Հետազոտությունն իրականացվել է.

- տնտեսավարող սուբյեկտների համար՝ ԼՂՀ վիճակագրության պետական խորհրդի 25.10.2010թ. թիվ 16 որոշմամբ հաստատված՝ «Ուղևորափոխադրումների հետազոտության» հարցաթերթի, իսկ
- ավտոտրանսպորտային միջոցների համար՝ ԼՂՀ վիճակագրության պետական խորհրդի 25.10.2010թ. թիվ 17 որոշմամբ հաստատված՝ «Ուղևորափոխադրումների հետազոտության» անհատական հարցաթերթերի միջոցով (*տես՝ հավելված 4*):

Հարցաթերթերում ներառված ցուցանիշները հնարավորություն են ընձեռել տեղեկատվություն ստանալ հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերի շարժակազմի և այդ շարժակազմի մակնիշների ու շահագործման ժամկետների, երթուղիների քանակի ու երթուղու երկարության, փոխադրված ուղևորների քանակի, ինչպես նաև երթուղի դուրս եկած մեքենաների քանակի, մեկ մեքենայի օրական միջին երթուղու քանակի, միջին ամսական աշխատանքային օրերի թվի և այլ ցուցանիշների վերաբերյալ: Հետազոտության արդյունքները հնարավորություն ընձեռեցին նաև ստանալ հիշատակված ցուցանիշների շրջանային կառուցվածքը:

2. ԱՎՏՈՍՈՒԹԻՒՆԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ-ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Ավտոտրանսպորտային կազմակերպությունների կողմից իրականացված ուղևորափոխադրումների վերաբերյալ վիճակագրությունը ԼՂՀ ԱՎԾ կողմից վարվում է հաշվի առնելով ԼՂՀ վիճակագրության պետական խորհրդի կողմից հաստատվող պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրերով սահմանված համապատասխան միջոցառումների իրագործման ապահովումը, իսկ միջնաժամկետ հատվածում՝ հիմք ընդունելով նաև ԼՂՀ Ազգային ժողովի կողմից հաստատվող ԼՂՀ «Պետական վիճակագրական աշխատանքների եռամյա» ծրագրով սահմանվող ռազմավարական ուղղությունները:

Խնդրո առարկա համատեքստում, հարկ է նշել, որ սույն հետազոտության իրականացումը, մասամբ ուղղորդված է նաև ԼՂՀ Ազգային ժողովի կողմից 2008 թվականի նոյեմբերի 26-ին ընդունված «Լեռնային Դարաբաղի Հանրապետության 2009-2011 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագիրը հաստատելու մասին» ԼՂՀ օրենքի հավելվածի 2.1 բաժնի «Տրանսպորտ և կապ» 2.1.5 ենթաբաժնով սահմանված հետևյալ ռազմավարական ուղղությունների իրագործմանը.

«...2) ավտոմոբիլային տրանսպորտի հիմնական ցուցանիշների (բեռնաուղևորափոխադրումներ, բեռնաուղևորաշրջանառություն) գծով չդիտարկվող (չհաշվառվող) դաշտի գնահատման մեթոդաբանության կատարելագործում՝ ըստ միջազգային մեթոդաբանությամբ սահմանված չափանիշների.

3) տրանսպորտի և կապի ոլորտների վիճակագրության մեթոդաբանական շարունակական կատարելագործում և դրա համադրելիության ապահովում՝ գործող միջազգային չափանիշներին համապատասխան:»:

Ավտոտրանսպորտով ուղևորափոխադրումներ իրականացնող տնտեսավարող սուբյեկտների գործունեության վերաբերյալ վիճակագրության վարման ժամանակ հաշվի է առնվում նաև ոլորտի իրավահարաբերությունները կարգավորող նորմատիվ իրավական ակտերը, մասնավորապես՝ ԼՂՀ քաղաքացիական օրենսգիրքը, «Տրանսպորտի մասին» ԼՂՀ օրենքը, «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ԼՂՀ օրենքը, «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ԼՂՀ օրենքը, ԼՂՀ կառավարության 2002 թվականի նոյեմբերի 26-ի «Լեռնային Դարաբաղի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման կարգը հաստատելու մասին» թիվ 36 որոշումը, ԼՂՀ կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 25-ի «Ընդհանուր օգտագործման ուղևորատար ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր փոխադրումների կազմակերպման գործունեության լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» թիվ 698 որոշումը, ԼՂՀ կառավարության 2008 թվականի ապրիլի 15-ի «Լեռնային Դարաբաղի Հանրապետության տարածքում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորափոխադրումների կազմակերպման կարգը հաստատելու մասին» թիվ 275 որոշումը և այլն:

Թվարկված իրավական ակտերով են տրվում նաև տրանսպորտի վիճակագրությանը վերաբերող հիմնարար հասկացություններն ու սահմանումները, որոնք, հաշվի առնելով՝ սույն հետազոտության նպատակներն ու խնդիրները, որպես մեթոդաբանական բնույթի

պարզաբանումներ ներկայացված են ստորև:

Մասնավորապես. ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորափոխադրումներն իրականացվում են ընդհանուր և ոչ ընդհանուր օգտագործման տրանսպորտով: Համաձայն ԼՂՀ Քաղաքացիական օրենսգրքի 859-րդ հոդվածի «Առևտրային կազմակերպության կողմից իրականացվող փոխադրումը համարվում է ընդհանուր օգտագործման տրանսպորտով կատարված, եթե օրենքից, այլ իրավական ակտերից կամ այդ կազմակերպությանը տրված թույլտվությունից (լիցենզիայից) բխում է, որ այդ կազմակերպությունը պարտավոր է բեռներ, ուղևորներ և ուղեբեռներ փոխադրել ցանկացած քաղաքացու կամ իրավաբանական անձի պահանջով»: Իր հերթին՝ ոչ ընդհանուր օգտագործման ավտոտրանսպորտն իրականացնում է տվյալ կազմակերպության ուղևորների փոխադրումները սեփական (վարձակալած) ավտոտրանսպորտային միջոցներով: Ուղևորափոխադրումները, ըստ վարչական տարածքի հատկանիշի, կազմակերպվում են ներքաղաքային, ներշրջանային, միջշրջանային, միջպետական, ըստ կազմակերպման բնույթի՝ կանոնավոր և ոչ կանոնավոր, ըստ նշանակության՝ ընդհանուր օգտագործման, զբոսաշրջային և հատուկ սկզբունքներով:

Ավտոբուսային կանոնավոր փոխադրումներն իրականացնում են միայն մրցութային եղանակով ընտրված կազմակերպությունները կամ անհատ ձեռնարկատերերը: Միջշրջանային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների մրցութները կազմակերպում և անցկացնում են լիազոր մարմնի, ներշրջանային ավտոբուսային կանոնավոր փոխադրումներինը՝ համապատասխան քաղաքային համայնքի ղեկավարի (Ստեփանակերտի քաղաքապետի) կազմած մրցութային հանձնաժողովները՝ մրցույթների անցկացման ժամանակացույցին համապատասխան:

Բացի նշվածից, տրանսպորտի վիճակագրությունում կիրառվող մյուս հիմնարար հասկացություններն են (համաձայն վերը թվարկված այլ իրավական ակտերով տրված սահմանումների).

- **տրանսպորտ**՝ պետության սոցիալ-տնտեսական համակարգի բաղկացուցիչ մաս, որը նախատեսված է քաղաքացիների և իրավաբանական անձանց տրանսպորտային պահանջարկի (կարիքների) բավարարման համար և ունի հետևյալ տեսակները՝ ավտոմոբիլային, երկաթուղային, օդային, ջրային, վերգետնյա էլեկտրական և խողովակաշարային,

- **ավտոմոբիլային տրանսպորտ**՝ ավտոտրանսպորտային միջոցների, հաղորդակցության ուղիների (ավտոմոբիլային ճանապարհների) և տեխնիկական կառուցվածքների ու շինությունների (ավտոմոբիլային տրանսպորտի օբյեկտների) ամբողջություն.

- **ավտոտրանսպորտային գործունեություն**՝ ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրումներ իրականացնելու համար նախատեսված տեխնիկական միջոցների, ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրումների կազմակերպման և իրականացման գործընթացի, ինչպես նաև այդ գործընթացում ավտոկայարանային կամ երթակարգավարական սպասարկման ծառայությունների մատուցման հետ կապված գործունեություն.

- **տրանսպորտային աշխատանք**՝ տրանսպորտային միջոցով փոխադրված բեռի (ուղևորների) քանակով և փոխադրման հեռավորությամբ բնութագրվող ցուցանիշ.

- **ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտ**՝ ավտոտրանսպորտային

միջոց կամ ավտոմոբիլային տրանսպորտի շարժակազմ, որոնցով փոխադրողը պարտավոր է ուղևորների, ուղեբեռների և բեռների վճարովի փոխադրում իրականացնել ցանկացած քաղաքացու կամ իրավաբանական անձի պահանջով և փոխադրման պայմանագրով.

- **ավտոտրանսպորտային միջոց՝** ավտոմոբիլային ճանապարհներով ուղևորներ և բեռներ փոխադրելու, ինչպես նաև ոչ տրանսպորտային աշխատանքներ կատարելու համար սարքավորված անհիվավոր տրանսպորտային միջոց

- **ավտոմոբիլային տրանսպորտի շարժական կազմ (շարժակազմ)՝** ավտոմոբիլային ճանապարհներով ուղևորներ, ուղեբեռներ և բեռներ փոխադրելու, ինչպես նաև ոչ տրանսպորտային աշխատանքներ կատարելու համար նախատեսված և այդ նպատակով սարքավորված՝ անհիվավոր ինքնագնաց կամ ավտոմոբիլի միջոցով քարշակումով ավտոտրանսպորտային միջոցների ընդհանրություն.

- **ավտոբուս՝** ինը և ավելի ուղևորների նստատեղ (բացառությամբ վարորդի նստատեղը) ունեցող տրանսպորտային միջոց, որը ելնելով նստատեղերի քանակից ստորաբաժանվում է՝ հատուկ փոքր (մինչև 16 նստատեղ), փոքր (17-ից մինչև 30 նստատեղ), միջին (31-ից մինչև 40 նստատեղ), մեծ (40 և ավելի նստատեղ) դասերի:

- **երթուղային տաքսի՝** հատուկ փոքր դասի ավտոբուս(միկրոավտոբուս), որով իրականացվում է կանոնավոր ուղևորափոխադրում ներքաղաքային կամ մերձքաղաքային երթուղով, միայն նախատեսված կանգառներում նստատեղերի քանակին համապատասխան թվով ուղևորների նստեցում և ուղևորի պահանջով երթուղու ուղեգծի թույլատրելի կետերում իջեցում կատարելով :

- **թեթև մարդատար ավտոմոբիլ՝** ավտոմոբիլ, որի նստատեղերի քանակը, բացառությամբ վարորդի նստատեղի, չի գերազանցում ութը.

- **մարդատար-տաքսի ավտոմոբիլ՝** թեթև մարդատար ավտոմոբիլ, որի միջոցով, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, իրականացվում է սպասարկման ծառայությունների մատուցում.

- **ներքաղաքային փոխադրում՝** քաղաքի (բնակավայրի) վարչական տարածքի սահմաններում իրականացվող փոխադրում.

- **մերձքաղաքային փոխադրում՝** քաղաքի (բնակավայրի) վարչական տարածքի սահմանից դուրս մինչև 50կմ ներառյալ հեռավորությամբ փոխադրում՝ հաշված քաղաքի (բնակավայրի) վարչական տարածքի սահմանից.

- **միջքաղաքային փոխադրում՝** քաղաքի(բնակավայրի) վարչական տարածքի սահմանից դուրս 50կմ-ից ավելի հեռավորության վրա իրականացվող փոխադրում՝ հաշված քաղաքի (բնակավայրի) վարչական տարածքի սահմանից.

- **ներշրջանային փոխադրում՝** շրջանի վարչական տարածքի սահմաններում իրականացվող փոխադրում.

- **միջշրջանային փոխադրում՝** շրջանների միջև այլ շրջանների վարչական տարածքների տարանցումով կամ առանց տարանցման իրականացվող փոխադրում.

- **միջպետական փոխադրում՝** պետությունների միջև այլ պետությունների տարածքների տարանցումով կամ առանց տարանցման իրականացվող փոխադրում.

- **կանոնավոր փոխադրում՝** սահմանված ուղեգծով ու հաստատված չվացուցակով, առաջարկված փոխադրավարձով, ուղևորների նստեցման և իջեցման հաստատված կանգառներով, ինչպես նաև երթուղային տաքսու ռեժիմով իրականացվող փոխադրում.

- **ոչ կանոնավոր փոխադրում՝** կազմակերպությունների կամ քաղաքացիների առանձին

պատվերներով իրականացվող փոխադրում, որի իրականացման պայմանները յուրաքանչյուր դեպքում որոշվում են պատվիրատուի և փոխադրողի փոխհամաձայնությամբ.

- **չվացուցակ՝** աղյուսակ (ժամանակացույց), որը ներառում է ավտոբուսների շարժման ժամանակի, տեղի և երթուղու իրականացման հաջորդականության մասին տվյալներ, և այլն:

Ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառում պետական կարգավորումն իրականացվում է ավտոմոբիլային տրանսպորտի ծառայություններից օգտվողների և ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրումներ իրականացնողների շահերի իրավական պաշտպանության և ավտոմոբիլային տրանսպորտի համալիր զարգացման, ամբողջական, արդյունավետ, անվտանգ և որակյալ գործունեության ապահովման նպատակով:

3. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Շուկայական տնտեսակարգի կառուցման և որպես դրա հետևանք, խոշոր ավտոտրանսպորտային կազմակերպությունների սեփականաշնորհման ու բազմաթիվ նոր տնտեսավարող սուբյեկտների ստեղծման գործընթացներն էական փոփոխություններ առաջացրին նաև ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների քանակական և որակական բնութագրիչներում: Իրականացված կառուցվածքային փոփոխություններն, իրենց հերթին, որոշակի դժվարություններ առաջացրին նաև ավտոտրանսպորտային ուղևորափոխադրումների վերաբերյալ վիճակագրական տվյալների հավաքագրման և դրանց ամբողջականության ու արժանահավատության ապահովման առումներով:

Ընդհանուր առմամբ, ավտոտրանսպորտային ուղևորափոխադրումների վիճակագրության առջև ծառայած խնդիրները կարելի է տարանջատել հետևյալ հիմնական խմբերում.

- ուղևորափոխադրումների և ուղևորաշրջանառության ծավալների վերաբերյալ շրջանային կտրվածքով ցուցանիշների ոչ ամբողջականությունը,
- միջազգային պրակտիկայում կիրառվող գործիքակազմերի ներդրումը՝ հաշվի առնելով ավտոտրանսպորտային գործունեության առանձնահատկությունները,
- ավտոտրանսպորտային ենթաճյուղի գործունեությունը բնութագրող ցուցանիշների լրահաշվարկների մեթոդաբանության կատարելագործումը,
- գործող ցուցանիշների համակազմի ընդլայնումն ու կատարելագործումը (երթուղիների միջին հեռավորություն, մեկ մեքենայի միջին օրական երթուղիների քանակ և այլն):

Խնդրո առարկա համատեքստում, ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների գործունեության վերաբերյալ վիճակագրական հաշվառման համընդգրկունության ապահովման նպատակով, ի թիվս պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերի միջոցով հավաքագրվող տեղեկատվության, կարևորվում է նաև համապատասխան ընտրանքային հետազոտությունների պարբերաբար անցկացումն ու կիրառվող գործիքակազմի շարունակական կատարելագործումը:

Վերոշարադրյալը հաշվի առնելով, սույն ընտրանքային հետազոտության հիմնական նպատակն էր ներքաղաքային, ներշրջանային, միջշրջանային, միջպետական ուղևորափոխադրումների վերաբերյալ վիճակագրության կատարելագործումը:

Մասնավորապես.

- ավտոտրանսպորտի գործունեությունը բնութագրող վիճակագրական տվյալների՝

միջազգայնորեն երաշխավորված մեթոդաբանությունների և չափորոշիչների հետ համադրելիության ապահովումը,

- տրանսպորտի վիճակագրությունում ընտրանքային մեթոդների կիրառումն ու դրանց մեթոդաբանության կատարելագործումը,
- շրջանային կտրվածքով ցուցանիշների համընդգրկունության ապահովումը,
- ավտոտրանսպորտի գործունեությունը բնութագրող վիճակագրական ցուցանիշների դինամիկայի ներկայացումը:

Հետազոտության արդյունքները ԼՂՀ ԱՎԾ-ին հնարավորություն կտան.

-ստանալ ամբողջական և հավաստի տեղեկատվություն ներքաղաքային, ներշրջանային, միջշրջանային, միջպետական ավտոտրանսպորտի գործունեության վերաբերյալ՝ ըստ շրջանների, մասնավորապես ուսումնասիրելով նաև ուղևորափոխադրումների և ուղևորաշրջանառության շրջանային կառուցվածքը և ծավալները,

- բարձրացնել տեղեկատվության ամբողջականությունն ու որակը,
- համալրել պաշտոնական վիճակագրության շրջանակում ավտոտրանսպորտի գործունեության վերաբերյալ առկա տեղեկատվական բազան նոր ցուցանիշներով,
- արձանագրել ոլորտում վիճակագրական վերջին ընտրանքային հետազոտությունից հետո տեղի ունեցած փոփոխությունները, ներկայացնել հիմնական ցուցանիշների դինամիկան:

Ստացված արդյունքները, միաժամանակ, հնարավորություն կտան արդիականացնել դիտարկման դաշտում ընդգրկված կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համակցությունը, ընդլայնել հրապարակվող ցուցանիշների շրջանակը, կատարելագործել կիրառվող մեթոդաբանությունը, համապատասխան տեղեկատվությամբ ապահովել ոլորտի քաղաքականության մշակման և իրագործման լիազորություններով օժտված պետական մարմիններին, ինչպես նաև ոլորտում գործող կամ գործունեություն իրականացնելու մտադրություն ունեցող տնտեսավարող սուբյեկտներին:

4. ԴԻՏԱՐԿՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Ինչպես և նախորդ հետազոտությունների ժամանակ, այս անգամ ևս հետազոտության իրականացման համար կիրառված մոտեցումը կարելի է տարանջատել երկու հիմնական մասի՝ համատարած և ընտրանքային:

Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի դիտարկման համար տեղեկատվության աղբյուր է հանդիսացել երթուղիների սպասարկման իրավունքի հատկացման մրցույթների արդյունքներով համապատասխան երթուղու սպասարկման իրավունքը հաղթած սուբյեկտների ցանկերը, որոնք տրամադրվել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր արտադրական ենթակառուցվածքների վարչության, Ստեփանակերտի քաղաքապետարանի կողմից: Ըստ էության, այդ ցանկերն էլ հանդիսացել են սույն հետազոտության ընտրանքի գլխավոր համակցությունը:

Մյուս կողմից, հաշվի առնելով դիտարկման առանձնահատկությունները, ինչպես նաև ուղևորափոխադրումներ իրականացնող տնտեսավարող սուբյեկտների կողմից սպասարկվող երթուղիներում աշխատող մեքենաների ու այդ երթուղիների երկարության միջև առկա էական տարբերությունները, որոշվել է կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը հետազոտել համատարած դիտարկման եղանակով (վերջիններս հետազոտվել են

կազմակերպությունների ու անհատ ձեռնարկատերերի համար նախատեսված հարցաթերթի միջոցով): Այլ կերպ ասած, սույն հետազոտության շրջանակում դիտարկվել են հանրապետության մայրաքաղաքում և շրջաններում ուղևորափոխադրումներ իրականացնող բոլոր սուբյեկտները և դրանց կողմից սպասարկվող բոլոր երթուղիները:

Հետազոտության իրականացման համար կիրառված ընտրանքի առնչությամբ հարկ է նաև նշել, որ վերջինս վերաբերել է երթուղիները սպասարկող միկրոավտոբուսներին և ավտոբուսներին: Հաշվի առնելով համեմատաբար սահմանափակ ռեսուրսները և այդ ռեսուրսների շրջանակում՝ հնարավորինս ներկայացուցչական տվյալների ստացման անհրաժեշտությունը, ներշրջանային, միջշրջանային և միջպետական ուղևորափոխադրումների հետազոտությունն անց է կացվել 7օր: Միաժամանակ, ուղևորափոխադրումների ծանրաբեռնվածության բաշխման անհամաչափությունների նկատառումով, դիտարկումներն իրականացվել են աշխատանքային և ոչ աշխատանքային օրերին՝ ներառելով բոլոր երթերը: Դիտարկումների միջինացված արդյունքներն արտացոլվել են համապատասխան հարցաթերթում:

Ներքաղաքային ուղևորափոխադրումների հետազոտությունն անց է կացվել Ստեփանակերտ, Շուշի և Բերձոր քաղաքներում՝ 7օր: Ընդ որում, հաշվի առնելով ուղևորափոխադրումների յուրահատկությունները (ծանրաբեռնվածության բաշխման անհամաչափությունները) դիտարկումներն իրականացվել են շաբաթվա աշխատանքային և ոչ աշխատանքային օրերին, ինչպես նաև այդ օրերի տարբեր ժամերին (հաշվի առնելով ուղևորահոսքերի մեծ տատանումները՝ օրվա սկզբին, միջնամասում և ավարտին):

Սույն հետազոտության իրականացման համար կիրառվել են վիճակագրական այնպիսի ստանդարտ գործիքներ, ինչպիսիք են ընտրանքի կազմակերպումը (որոշակի, վերը նշված առանձնահատկություններով), ծրագրային ապահովումը և այլն:

5. ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄԸ

Ոլորտում գործող տնտեսավարող սուբյեկտներից անհրաժեշտ տեղեկությունների հավաքագրման, ինչպես նաև երթուղիները սպասարկող մեքենաների դիտարկման աշխատանքների ողջ գործընթացն իրականացվել է ԼԳՀ ազգային վիճակագրական ծառայության աշխատակիցների (այսուհետ՝ հարցազրուցավարներ) կողմից:

Սինչ այդ, հետազոտության նախապատրաստման և անցկացման նպատակով, իրականացվել են հարցազրուցավարների հրահանգավորման աշխատանքներ, նրանց են հանձնվել դիտարկման համար անհրաժեշտ հարցաթերթերը, լրացման հրահանգները, ինչպես նաև գործող տնտեսավարող սուբյեկտների ու համապատասխան երթուղիների ցուցակները:

Հրահանգավորման ընթացքում, հարցազրուցավարներին պարզաբանումներ են տրվել հարցաթերթերում ներառված ցուցանիշների լրացման, ինչպես նաև դրանց առանձնահատկությունների վերաբերյալ: Մանրամասն պարզաբանումներ են տրվել նաև սուբյեկտների կողմից հարցաթերթի լրացմանը մասնակցելուց հրաժարվելու և այլ դեպքերի ժամանակ հարցաթերթերի լրացման առանձնահատկությունների վերաբերյալ:

Ստացվող տեղեկատվության հնարավոր բարձր որակ ապահովելու, ինչպես նաև հարցաթերթերում զետեղված հարցերին պատասխանելուց հրաժարվելու, մասնակիորեն պատասխանելու և (կամ) այլ դեպքերը նվազագույնի հասցնելու նպատակով ԼԳՀ ԱՎԾ կողմից իրականացվել են նաև մի շարք միջոցառումներ հետազոտության անհրաժեշտության

և դրա նպատակների պարզաբանման, հարցաթերթերի լրացման առումով հետազոտության մեջ ընդգրկված տնտեսավարող սուբյեկտների ակտիվության բարձրացման և վերջիններիս կողմից գործուն օժանդակություն ցուցաբերելու նպատակով:

Տվյալների հավաքագրումն իրականացվել է ըստ Ստեփանակերտ քաղաքի և հանրապետության շրջանների: Հարցազրուցավարների կողմից լրացված հարցաթերթերը թվաբանական և տրամաբանական ստուգման ենթարկվելուց հետո ենթարկվել են համակարգչային մշակման, որի արդյունքում ստացվել են ելքային աղյուսակներ:


6. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

6.1. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՉԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՉԱՓԵՐԸ

Ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի հետազոտությունն ընդգրկել է հանրապետության տարածքում գրանցված 17 կազմակերպություն և 6 անհատ ձեռնարկատեր: Հետազոտության ժամանակաընթացքում բոլոր նշված սուբյեկտները գործունեություն են ծավալել (տես՝ հավելված 1, աղյուսակ 1):

Ընդ որում՝ 4 կազմակերպություն սպասարկում է ներքաղաքային, 6 կազմակերպություն և 1 անհատ ձեռնարկատեր՝ ներշրջանային, 12 կազմակերպություն և 3 անհատ ձեռնարկատեր՝ միջշրջանային, 9 կազմակերպություն և 3 անհատ ձեռնարկատեր՝ միջպետական երթուղիները:


Գծապատկեր 1. Երթուղիների հաղորդակցության տեսակներում ընդգրկված սուբյեկտների կառուցվածքը (տոկոսով ընդամենի նկատմամբ)



Գործող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի բաշխվածության դիտարկմամբ պարզվում է, որ դրանց գերակշիռ մեծամասնությունը բաժին է ընկել Ստեփանակերտ քաղաքին (34.8 տոկոս): Մյուս շրջաններում գործող սուբյեկտների տեսակարար կշիռները տատանվել են 4.3 տոկոսից մինչև 21.8 տոկոսի սահմաններում (հավելված 1, աղյուսակներ 1, 2, 3):


Հետազոտության մեջ ընդգրկված գործող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կառուցվածքն ըստ շրջանների արտացոլված է գծապատկեր 2-ում:

Գծապատկեր 2. Գործող սուբյեկտների կառուցվածքն ըստ շրջանների (տոկոսով ընդամենի նկատմամբ)



Ընդ որում ուղերափոխադրումներ իրականացնող անհատ ձեռնարկատերերի 33.3-ական տոկոսը գործում են Ստեփանակերտում և Քաշաթաղի շրջանում, 16.7-ական տոկոսը՝ Մարտունու և Շահումյանի շրջաններում:

Գծապատկեր 3. Գործող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կառուցվածքն ըստ շրջանների (տոկոսով ընդամենի նկատմամբ)




Հետազոտության արդյունքների համաձայն, ոլորտում գործող կազմակերպությունների գերակշիռ մեծամասնության համար կազմակերպական-իրավական ձև է հանդիսացել սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, որի տեսակարար կշիռը կազմել է ընդամենի 43.5 տոկոսը, այդ թվում կազմակերպությունների՝ 58.8 տոկոսը, իսկ Ասկերանի, Հաղրոթի և Մարտակերտի շրջաններում՝ 100.0 տոկոս:

Փակ բաժնետիրական ընկերությունների տեսակարար կշիռը կազմել է հետազոտված սուբյեկտների 21.8տոկոսը կամ 5 կազմակերպություն: Հատկանշական է, որ գործող սուբյեկտների ընդհանուր քանակում ցածր տեսակարար կշիռ են ունեցել արտադրական կոոպերատիվները՝ 4.3տոկոս: Անհատ ձեռնարկատերերի տեսակարար կշիռը կազմել է ընդամենի 26.1 տոկոսը (հավելված 1, աղյուսակներ 4,5,6):

Գործող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի բաշխումն ըստ կազմակերպական-իրավական ձևերի արտացոլված է ստորև բերված գծապատկեր 4-ում:


Գծապատկեր 4. Գործող սուբյեկտների բաշխումն ըստ կազմակերպական իրավական ձևերի (տոկոսով ընդամենի նկատմամբ)



Ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի* սուբյեկտների դիտարկումը ցույց է տալիս, որ կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի 43.5 տոկոսը եղել են գերփոքր(ունեցել են մինչև 5 աշխատող), 26.1 տոկոսը՝ փոքր(6-ից մինչև 15 աշխատող), 8.7 տոկոսը եղել են միջին(16-ից մինչև 30 աշխատող) և 21.7 տոկոսը խոշոր (31 և ավել աշխատող):

Հատկանշական է, որ ոլորտում գործող անհատ ձեռնարկատերերի զգալի մասը գերփոքր են (ունեցել են մինչև 5 աշխատող):

Գծապատկեր 5. Գործող սուբյեկտների բաշխումն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի




Շրջանային բաշխվածության առումով՝ խոշոր սուբյեկտները գերակա են եղել միայն Ստեփանակերտ քաղաքում(Ստեփանակերտի ընդամենի 50.0 տոկոսը) և Ասկերանի շրջանում(Ասկերանի շրջանի 100.0 տոկոսը), մինչդեռ մյուս շրջաններում, բացի Հաղթուքի և Մարտակերտի շրջաններից, գերակայող են եղել գերփոքր սուբյեկտները: Ընդ որում, հատկանշական է, որ Մարտունու, Շուշիի, Քաշաթաղի և Շահումյանի շրջաններում միջին և խոշոր սուբյեկտներ չեն արձանագրվել (հավելված 1, աղյուսակներ 7, 8 և 9):

Սուբյեկտների քանակի բաշխումն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի բերված է գծապատկեր 6-ում:

* Հիմք են ընդունվել «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ԼՂՀ օրենքի հոդված 2-ով գործունեության տարբեր տեսակների համար սահմանված աշխատողների թվաքանակի չափորոշիչները, համաձայն որոնց. ԼՂՀ-ում ՓՄՁ սուբյեկտները դասակարգվում են՝ գերփոքր (որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը չի գերազանցում 5 մարդը), փոքր (որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը չի գերազանցում՝ ... տրանսպորտի, առևտրի և ծառայությունների բնագավառում՝ 15 մարդը), միջին (որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը չի գերազանցում՝ ... տրանսպորտի, առևտրի և ծառայությունների բնագավառում՝ 30 մարդը)

Գծապատկեր 6. Գործող սուբյեկտների բաշխումն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի, շրջաններով




6.2. ՄԻԿՐՈԱՎՏՈՔՈՒՄՆԵՐԻ ՇԱՐԺԱԿԱԳՄԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՏԵՆԵԻԿԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Ավտոտրանսպորտով իրականացվող ուղևորափոխադրումների ծավալը, բնականաբար, պայմանավորված է շարժակազմի ավտոմեքենաների քանակից ու մակնիշից, ինչպես նաև տեխնիկատնտեսական այլ ցուցանիշներից՝ շահագործման ժամկետից, տեղատարողությունից և այլն:

Համաձայն կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից լրացված հարցաթերթերի տվյալների, հետազոտության պահի դրությամբ, ուղևորափոխադրումներ իրականացնող սուբյեկտներին պատկանող շարժակազմը կազմել է 221 միավոր, այդ թվում՝ միկրոավտոբուսներ՝ 174, ավտոբուսներ՝ 47:

Նշված քանակի միկրոավտոբուսներից Ստեփանակերտ քաղաքում է գործել դրանց 50.6 տոկոսը: Տեսակարար կշռի առումով Ստեփանակերտ քաղաքին հաջորդում են Մարտակերտի (13.2 տոկոս), Հաղրուքի (10.3 տոկոս), Ասկերանի (9.2 տոկոս), Մարտունու (8.0 տոկոս), Շուշիի (5.8 տոկոս), Քաշաթաղի (2.3 տոկոս) և Շահումյանի (0.6 տոկոս) շրջանները:

Գծապատկեր 7. Միկրոավտոբուսների շարժակազմի բաշխման կառուցվածքը ըստ մակնիշների՝ շրջանային տարբերակմամբ




Ըստ մակնիշների դիտարկելու պարագայում՝ հատկանշական է նաև այն, որ բոլոր շրջաններում, բացի Մարտունու և Շահումյանի շրջաններից, գերակայել է «Գազել» մակնիշի միկրոավտոբուսները: Մարտունու շրջանում գերակայել են «Ֆորդ» մակնիշի

միկրոավտոբուսները (հավելված 1, աղյուսակներ 10, 11 և 12):

Ավտոտրանսպորտային գործունեություն իրականացնող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի միկրոավտոբուսների շարժակազմի բաշխման կառուցվածքն ըստ մակնիշների արտացոլված է ստորև բերված գծապատկեր 8-ում:

Գծապատկեր 8. Միկրոավտոբուսների շարժակազմի բաշխման կառուցվածքն ըստ մակնիշների




Ինչպես և ենթադրվում էր, միկրոավտոբուսների մակնիշների նման բաշխվածությունն էական ազդեցություն է թողել նաև շարժակազմի շահագործման ժամկետների և դրանց բաշխման արդյունքների վրա:

Այսպես, համաձայն ստացված արդյունքների, միկրոավտոբուսների գերակշիռ մասի շահագործման ժամկետները կազմում է 3-ից 20 տարի (3.1-10 տարի՝ 43.7 տոկոս և 10.1-20 տարի 30.4 տոկոս): Ընդ որում, նշված հանգամանքի վրա թերևս իր ազդեցությունն է թողել «Գազել» և «Ֆորդ» մակնիշի միկրոավտոբուսների բաշխվածության առանձնահատկությունը: Եթե մինչև 3տարի, 3.1-10.0 տարի և 10.1-20.0 տարի շահագործվող միկրոավտոբուսների համապատասխանաբար 86.1 տոկոսը, 60.5 տոկոսը և 52.8 տոկոսը կազմել են «Գազել»-ները, ապա 20.1 և ավելի տարի շահագործվող մեքենաների պարագայում արդեն գերակայող են եղել «Ֆորդ»-երը՝ 100.0 տոկոս (հավելված 1, աղյուսակներ 13, 14 և 15):

Միկրոավտոբուսների շարժակազմի բաշխման կառուցվածքն ըստ մակնիշների և շահագործման ժամկետների բերված է գծապատկեր 9-ում:


Գծապատկեր 9. Միկրոավտոբուսների շարժակազմի բաշխման կառուցվածքն ըստ մակնիշների և շահագործման ժամկետների



Իրենց հնամաշուքյամբ աչքի են ընկնում Հաղրուքի և Մարտակերտի շրջաններում գործող սուբյեկտների միկրոավտոբուսները, այսպես. Հաղրուքի շրջանի միկրոավտոբուսների 66.7 տոկոսի և Մարտակերտի շրջանի միկրոավտոբուսների 100.0 տոկոսի շահագործման ժամկետը գտնվում է 10-ից մինչև 20 տարի ժամկետային միջակայքում, ինչը գլխավորապես Գազել մակնիշի միկրոավտոբուսների շահագործման ժամկետների հետևանք է:

Ստեփանակերտ քաղաքում և մնացած շրջաններում գործող միկրոավտոբուսները, հակառակը, աչքի են ընկնում իրենց շահագործման համեմատաբար փոքր ժամկետներով: Ուղևորափոխադրումներ իրականացնող սուբյեկտների միկրոավտոբուսների բաշխման կառուցվածքն ըստ դրանց շահագործման ժամկետների՝ շրջաններով պատկերված է գծապատկեր 10-ում:

Գծապատկեր 10. Միկրոավտոբուսների բաշխման կառուցվածքն ըստ շահագործման ժամկետների, շրջաններով




6.3 ԱՎՏՈՌՈՒՄՆԵՐԻ ՇԱՐԺԱԿԱԶՄԸ ԵՎ ԴԻՄՆՑ ՏԵՆՆԻԿԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Համաձայն հետազոտության արդյունքների՝ ուղևորափոխադրումներ իրականացնող սուբյեկտների կողմից սպասարկվող երթուղիներում գործող ավտոբուսների քանակը կազմել է 47, որի 63.8 տոկոսը գործել է Ստեփանակերտում: Տեսակարար կշռի առումով Ստեփանակերտ քաղաքին հաջորդում են Ասկերանի (23.4 տոկոս), Հաղրուքի (8.5 տոկոս) և Մարտունու (4.3տոկոս) շրջանները: Մարտակերտի, Շուշիի, Քաշաթաղի և Շահումյանի շրջաններում ավտոբուսներով երթուղիներ սպասարկող սուբյեկտներ չեն գրանցվել (հավելված 1, աղյուսակներ 10,11,12):

Ընդհանուր առմամբ, սուբյեկտներին պատկանող ավտոբուսները եղել են «Հոնդայի» (51.1 տոկոս), «ՊԱԶ» (42.5 տոկոս) և «ԿՎԶ» (6.4 տոկոս) մակնիշների:Ընդ որում Ստեփանակերտում գերակայող են եղել «Հոնդայի», իսկ շրջաններում «Պազ» մակնիշի ավտոբուսները:

Ավտոբուսների շարժակազմի բաշխման շրջանային կառուցվածքն ըստ մակնիշների արտացոլված է գծապատկեր 11-ում:


Գծապատկեր 11. Ավտոբուսների շարժակազմի բաշխման կառուցվածքն ըստ մակնիշների, շրջաններով



Ուշարժան է հանգամանքը, որ Ստեփանակերտ քաղաքում և շրջաններում չեն արձանագրվել «ԼԱԶ», «Իկարուս», «Ռենո» և այլ մակնիշի ավտոբուսներով ուղևորափոխադրումներ իրականացնելու դեպքեր:

Ավտոտրանսպորտային գործունեություն իրականացնող սուբյեկտների ավտոբուսների շարժակազմի բաշխման կառուցվածքն ըստ մակնիշների արտացոլված է ստորև բերված գծապատկեր 12-ում:

Գծապատկեր 12. Ավտոբուսների շարժակազմի բաշխման կառուցվածքն ըստ մակնիշների




Միկրոավտոբուսների համար ստացված շահագործման ժամկետների համամասնությունները, բնութագրական չեն եղել ավտոբուսների համար: Այսպես, համաձայն հետազոտվողների կողմից ներկայացված տեղեկատվության, ավտոտրանսպորտային գործունեություն իրականացնող սուբյեկտների կողմից շահագործվող ավտոբուսների ընդամենի կառուցվածքում գերակշռել են «նոր» մինչև 3 տարի շահագործման ժամկետ ունեցող ավտոբուսները, որոնք կազմել են ընդամենի 63.8 տոկոսը: Հին են թե «ՊԱԶ», թե «ԿՎԶ» մակնիշի ավտոբուսների գերակշիռ մասը, դրանց շահագործման ժամկետը 10.1 և ավելի տարի է (համապատասխանաբար 70.0 տոկոս և 100.0 տոկոս):

Ակնհայտ է, որ ուղևորափոխադրումների համար շրջաններում նույնպես հիմնականում օգտագործվում են «հին» ավտոբուսներ, բացառությամբ Մարտունու շրջանից, որտեղ ուղևորափոխադրումներ իրականացնող 2 ավտոբուսներն էլ ունեցել են մինչև 3 տարի շահագործման ժամկետ: Նշված հանգամանքն բացատրվում է ավտոբուսների մակնիշների

վերլուծությամբ. ԼՂՀ շրջաններում շահագործվում են հիմնականում «ՊԱԶ» և «ԿՎԶ» մակնիշի հին ավտոբուսներ(հավելված 1, աղյուսակներ 16, 17 և 18):

Ավտոտրանսպորտային գործունեություն իրականացնող սուբյեկտների ավտոբուսների շարժակազմի բաշխման կառուցվածքն ըստ մակնիշների և շահագործման ժամկետների բերված է գծապատկեր 13-ում:

Գծապատկեր 13. Ավտոբուսների շարժակազմի բաշխման կառուցվածքն ըստ մակնիշների և շահագործման ժամկետների



6.4 ՄԻԿՐՈՎԱՏՈՔՈՒՍԱՅԻՆ ԵՐԹՈՒՂԻՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ

Ինչպես արդեն վերը նշվել էր, ուղևորափոխադրումների ընտրանքային հետազոտությունն ընդգրկել է երկու տարբեր բաղադրիչներ, որոնք ուղղորդված են եղել նախ՝ կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներկայացված ցուցանիշների ուսումնասիրությանն ու վերլուծությանը, այնուհետև՝ կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից սպասարկվող համապատասխան կոնկրետ (առանձին) երթուղիների դիտարկմանը և ստացված արդյունքների հիման վրա պաշտոնական վիճակագրական ցուցանիշների լրահավարկների համար կիրառելի հաշվարկային գործակիցների ստացմանը:

Ըստ այդմ, համաձայն լրացված անհատական հարցաթերթերի արդյունքների՝ կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից սպասարկվող միկրոավտոբուսային երթուղիների քանակը կազմել է 78, որի 30.8 տոկոսը բաժին է ընկել Ստեփանակերտին: Տեսակարար կշռով Ստեփանակերտ քաղաքին հաջորդում են Մարտակերտի (19.2 տոկոս), Մարտունու (15.4 տոկոս), Ասկերանի (11.5 տոկոս) և Հաղրուքի (10.3 տոկոս) շրջանները, իսկ առավել ցածր տեսակարար կշռով առանձնացել են Քաշաթաղի (6.4 տոկոս), Շուշիի (5.1 տոկոս) և Շահումյանի (1.3 տոկոս) շրջանները՝ (հավելված 2, աղյուսակներ 1, 2 և 3):


Երթուղիներն ըստ դրանց երկարության բաշխվածության դիտարկելիս՝ հարկ է նկատել, որ Շուշիի շրջանում և Ստեփանակերտ քաղաքում գերակայող են եղել մինչև 15.0 կմ երկարություն ունեցող երթուղիները, որոնք կազմել են ընդամենի համապատասխանաբար 50.0 տոկոսը և 37.5 տոկոսը, Ասկերանի շրջանում՝ 15.1-45.0 կմ երկարություն ունեցող երթուղիները(ընդամենի 55.6 տոկոսը), Շահումյանի, Մարտակերտի, Մարտունու և Հաղրուքի շրջաններում՝ 45.1-75.0կմ երկարություն ունեցողները՝ համապատասխանաբար 100.0 տոկոսը, 53.3 տոկոսը, 50.0 տոկոսը և 37.5 տոկոսը: Քաշաթաղի շրջանում բոլոր երթուղիները գերազանցել են 105կմ-ը: Նշված ցուցանիշների վրա անշուշտ, իրենց ազդեցությունն են թողել համապատասխան շրջանի հեռավորությունը մայրաքաղաքից:

Հաշվարկված միջին ցուցանիշների համաձայն, միկրոավտոբուսային երթուղիների

միջին երկարությունը կազմել է 96.5 կմ:


Միկրոավտոբուսային երթուղիների քանակի բաշխումը ըստ երթուղու երկարության արտացոլված է ստորև բերված գծապատկեր 14-ում:

Գծապատկեր 14. Միկրոավտոբուսային երթուղիների քանակի բաշխումը ըստ երթուղու երկարության (տոկոսով ընդամենի նկատմամբ)



Խնդրո առարկա ցուցանիշն ըստ շրջանային բաշխվածության դիտարկելիս երևում է, որ մինչև 15.0 կմ երկարություն ունեցող երթուղիների կազմում առավել բարձր տեսակարար կշռով առանձնացել է Ստեփանակերտ քաղաքը (64.2 տոկոս) և Ասկերանի շրջանը (21.4 տոկոս), 15.1-45.0 կմ երկարություն ունեցողների կազմում՝ Ասկերանի և Մարտունու շրջանները (35.7-ական տոկոս), 45.1-75.0 կմ երկարություն ունեցող երթուղիների կազմում՝ Մարտակերտի (32.0 տոկոս), Մարտունու շրջանն ու Ստեփանակերտ քաղաքը (24.0-ական տոկոս), 75.1-105.0 կմ երկարություն ունեցող երթուղիների կազմում՝ Մարտակերտի շրջանը (60.0 տոկոս), իսկ 105.1 կմ և ավելի երկարություն ունեցող երթուղիների կազմում Ստեփանակերտը (30.0 տոկոս) և Քաշաթաղի շրջանը (25.0 տոկոս):


Գծապատկեր 15. Միկրոավտոբուսային երթուղիների քանակի բաշխումը ըստ երթուղու երկարության, շրջաններով (տոկոսով շրջանի ընդամենի նկատմամբ)



Հետազոտության արդյունքները հնարավորություն են տվել ուսումնասիրել նաև միկրոավտոբուսային երթուղիների բաշխվածությունը ըստ երթուղին սպասարկող


մեքենաների քանակի և երկարության:

Գծապատկեր 16. Միկրոավտոբուսային երթուղիների քանակի բաշխումը ըստ երթուղին սպասարկող մեքենաների քանակի (տոկոսով ընդամենի նկատմամբ)



Երթուղիների 91.0 տոկոսը սպասարկվում է մեկ կամ երկու մեքենայով, 6.4 տոկոսը՝ 3-6 մեքենայով, իսկ 2.6 տոկոսը՝ 10 և ավելի մեքենայով: Մեկ կամ երկու մեքենայով սպասարկվող երթուղիների 35.2 տոկոսը բաժին է ընկնում 45.1-75.0 կմ երկարությամբ երթուղիներին, երեք և ավելի մեքենայով սպասարկվող երթուղիների 85.7 տոկոսը՝ մինչև 15.0 կմ երկարությամբ երթուղիներին:


Գծապատկեր 17. Միկրոավտոբուսային երթուղիների քանակի բաշխումը ըստ երթուղին սպասարկող մեքենաների քանակի, շրջաններով (տոկոսով շրջանի ընդամենի նկատմամբ)



Հարկ է նկատել, որ Ստեփանակերտ քաղաքում և Շուշիի շրջանում միկրոավտոբուսային երթուղիների համար առավել բնութագրական են եղել մինչև 15.0 կմ երկարություն ու մինչև 2 մեքենա և 3-6 մեքենա ունեցող երթուղիների հարաբերակցությունը, Ասկերանի շրջանում 15.1-45.0 կմ երկարություն ու մինչև 2 մեքենա ունեցող երթուղիների հարաբերակցությունը, Հաղրոթի, Մարտակերտի, Մարտունու և Շահումյանի շրջանում 45.1-105.0 կմ երկարություն ու մինչև 2 մեքենա ունեցող երթուղիների հարաբերակցությունը, Քաշաթաղի շրջանում 105.1 կմ և ավելի երկարություն ու մինչև 2 մեքենա ունեցող երթուղիների հարաբերակցությունը (հավելված 2, աղյուսակներ 7, 8 և 9):


Միկրոավտոբուսային երթուղիների քանակի բաշխումն ըստ երթուղու երկարության և սպասարկող մեքենաների քանակի արտացոլված է ստորև բերված գծապատկեր 18 -ում:

Գծապատկեր 18. Միկրոավտոբուսային երթուղիների քանակի բաշխումն ըստ երթուղու երկարության և սպասարկող մեքենաների քանակի




Ըստ մեկ միկրոավտոբուսի երթուղու միջին տևողության երթուղիների կառուցվածքում գերակայող է 121 րոպե և ավելի միջին տևողությամբ երթուղիները՝ 30.8 տոկոս, ցածր է 91-120 րոպե միջին տևողությամբ երթուղիների տեսակարար կշիռը՝ 10.2 տոկոս:

Գծապատկեր 19. Միկրոավտոբուսային երթուղիների քանակում ըստ մեկ միկրոավտոբուսի երթուղու միջին տևողության (տոկոսով ընդամենի նկատմամբ)




Հետազոտությամբ ստացված արդյունքներով՝ մինչև 15.0 և 15.1-45.0 կմ երկարություն ունեցող երթուղիները միկրոավտոբուսները հիմնականում անցնում են մինչև 30 և 31-60 րոպեում (համապատասխանաբար՝ 50.0 և 39.3 տոկոս), 45.1-75.0 կմ երկարություն ունեցող երթուղիները՝ 61-90 րոպեում (60.0 տոկոս), 75.1-105.0 կմ և 105.1 կմ և ավելի երկարություն ունեցող երթուղիները՝ 121 րոպեից ավել ժամանակահատվածում (համապատասխանաբար 60.0 տոկոս և 100.0 տոկոս) (հավելված 2, աղյուսակներ 13, 14 և 15): Միկրոավտոբուսային երթուղիների քանակի բաշխումն ըստ երթուղու երկարության և միջին տևողության արտացոլված է ստորև բերված գծապատկեր 20-ում:

Գծապատկեր 20. Միկրոավտոբուսային երթուղիների քանակի բաշխումն ըստ երթուղու երկարության և միջին տևողության



Հետազոտության արդյունքները հնարավորություն են ընձեռել նաև տեղեկատվություն ստանալ երթուղիները սպասարկող մեքենաների շարժման միջակայքերի վերաբերյալ:


Գծապատկեր 21. Միկրոավտոբուսային երթուղիների քանակի բաշխումն ըստ երթուղու շարժման միջին միջակայքի (տոկոսով ընդամենի նկատմամբ)



Ընդհանուր առմամբ, միկրոավտոբուսների համար, որպես շարժման միջակայք առավել հատկանշական է եղել 4-ից մինչև 48 ժամ ժամանակահատվածը, որի տեսակարար կշիռն ընդամենի նկատմամբ կազմել է 53.8 տոկոս: Հարկ է նկատի ունենալ այն հանգամանքը, որ նշված ցուցանիշի վրա իր ազդեցությունն են թողել ք.Ստեփանակերտի, Հաղբուքի, Մարտակերտի և Մարտունու շրջանների համապատասխանաբար՝ 50.0, 50.0, 80.0 և 75.0 տոկոս տեսակարար կշիռները, մինչև 1 ժամ և 1.1-4.0 ժամ շարժման միջակայքերը առավելապես բնութագրականն են Շուշիի և Ասկերանի շրջաններին ու Ստեփանակերտ քաղաքին, համապատասխանաբար՝ 50.0, 44.4 և 33.3 տոկոս: (հավելված 2, աղյուսակներ 19, 20 և 21):

Միկրոավտոբուսային երթուղիների քանակի բաշխումն ըստ երթուղու երկարության և շարժման միջին միջակայքի արտացոլված է ստորև բերված գծապատկեր 22-ում:

Գծապատկեր 22. Միկրոավտոբուսային երթուղիների քանակի բաշխումն ըստ երթուղու երկարության և շարժման միջին միջակայքի




Գծապատկերից ակնհայտ է, որ մինչև 15,0 կմ երկարությամբ երթուղիների 71.5 տոկոսը ունեն շարժման մինչև 1 ժամ միջին միջակայք, 15.1-45.0 կմ և ավելի երկարությամբ երթուղիների 85.8 տոկոսը՝ 4 ժամից ավելի, 45.1-75.0կմ երկարությամբ երթուղիների 48.0 տոկոսը՝ 4-24 ժամ և ավելի, 75.1-105.0 կմ-ը երկարությամբ երթուղիների 80.0 տոկոսը՝ 24 - 48 ժամ, 105.1 կմ գերազանցող երթուղիների 55.0 տոկոսը՝ 48 ժամից ավելի շարժման միջին միջակայք:

6.5 ԱՎՏՈՐՈՒՍԱՅԻՆ ԵՐՔՈՒԴԻՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ

Ավտորուսային երթուղիներն՝ ըստ երկարության ունեցել են հետևյալ բաշխումը՝ մինչև 15.0 կմ երկարությամբ երթուղիները կազմել են ընդամենի 19.4 տոկոսը, 15.1-45.0 կմ երկարությամբ երթուղիները՝ 48.4 տոկոսը, 45.1-75.0 կմ երկարությամբ երթուղիները՝ 29.0 տոկոս, 105.1 կմ և ավելի երկարությամբ երթուղիները՝ 3.2 տոկոս: 75.1-105.0 կմ երկարությամբ ավտորուսային երթուղիներ հետազոտության ընթացքում չեն գրանցվել:


Ավտորուսային երթուղիների շրջանային կառուցվածքը երթուղիների ընդամենի նկատմամբ արտացոլված է ստորև բերված գծապատկեր 23-ում:

Գծապատկեր 23. Ավտորուսային երթուղիների շրջանային կառուցվածքը (տոկոսով ընդամենի նկատմամբ)



Ըստ շրջանային բաշխվածության դիտարկելու պարագայում՝ ավտորուսային երթուղիների 32.3 տոկոսը կատարվել են Ասկերանի շրջանում: Շուշիի շրջանում ուղևորափոխադրումներ իրականացնող ավտորուսային երթուղիներ չեն գրանցվել:

Գծապատկեր 24. Ավտորուսային երթուղիների քանակի բաշխումն ըստ երթուղու երկարության, շրջաններով (տոկոսով շրջանի ընդամենի նկատմամբ)




Ստեփանակերտ քաղաքին բաժին են ընկնում մինչև 15.0 կմ երկարություն ունեցող բոլոր երթուղիների գգալի մասը՝ 50.0տոկոսը, Ասկերանի շրջանին՝ 15.1-45.0 կմ երկարությամբ երթուղիների 60.0 տոկոսը, Քաշաթաղի շրջանի՝ 45.1-75 կմ երկարությամբ երթուղիների 33.4 տոկոսը: 105.1 կմ և ավելի երկարություն ունեցող երթուղիներ գրանցվել են միայն Շահումյանի շրջանում (100.0 տոկոս) (հավելված 2, աղյուսակներ 4, 5 և 6):

Հաշվարկված միջին ցուցանիշների համաձայն, ավտոբուսային երթուղիների միջին երկարությունը կազմել է 35.6 կմ:

Ավտոբուսային երթուղիների քանակի բաշխումը երթուղու միջին երկարության նկատմամբ արտացոլված է ստորև բերված գծապատկեր 25-ում:

Գծապատկեր 25. Ավտոբուսային երթուղիների քանակի բաշխումն ըստ երթուղու միջին երկարության նկատմամբ




Ուշագրավ է հանգամանքը, որ ընդհանուր երթուղիների 87.1 տոկոսը սպասարկվում են մեկ կամ 2 ավտոբուսով (հավելված 2, աղյուսակներ 10, 11 և 12):

Համաձայն հետազոտության արդյունքների, մինչև 15.0կմ երկարություն ունեցող երթուղիները ավտոբուսները անցնում են մինչև 30 և 31-60 րոպեում (50.0-ական տոկոս), 15.1-45.0կմ երկարություն ունեցող երթուղիները՝ 31-60 րոպեում(66.7տոկոս), 45.1-75.0կմ երկարություն ունեցող երթուղիները՝ 61-90 և 91-120 րոպեում (համապատասխանաբար՝ 55.6 և 33.3 տոկոս), 105.1 կմ և ավելի երկարություն ունեցող երթուղիները՝ 121 և ավել րոպեում (100.0 տոկոս) (հավելված 2, աղյուսակներ 16, 17 և 18):

Ավտոբուսային երթուղիների քանակի բաշխումն ըստ երթուղու երկարության և միջին տևողության արտացոլված է ստորև բերված գծապատկեր 26-ում:

Գծապատկեր 26. Ավտոբուսային երթուղիների քանակի բաշխումն ըստ երթուղու երկարության և միջին տևողության




Ավտոբուսային երթուղիների շրջանային կառուցվածքը ըստ երթուղու միջին տևողության արտացոլված է ստորև բերված գծապատկեր 27-ում:

Ըստ հանրապետության շրջանների դիտարկելով երթուղու միջին տևողության հատկանիշով ավտոբուսային երթուղիների բաշխումը, կտեսնենք, որ Ստեփանակերտ


քաղաքում և Ասկերանի շրջանում գերակայում են մինչև 31-60 թույն (համապատասխանաբար 100.0 տոկոս և 70.0 տոկոս), Հաղբուքի, Մարտակերտի և Մարտունու շրջաններում 61-90 թույն (համապատասխանաբար 100.0, 66.7 և 60.0 տոկոս), Շահումյանի շրջանում՝ 121 թույն և ավելի (100.0 տոկոս), իսկ Քաշաթաղի շրջանում մինչև 30 թույն, 91-120 թույն (33.3-ական տոկոս) միջին տևողությամբ երթուղիները:

Գծապատկեր 27. Ավտոբուսային երթուղիների շրջանային կառուցվածքը ըստ երթուղու միջին տևողության (տոկոսով շրջանի ընդամենի նկատմամբ)



Ընդհանուր առմամբ, ավտոբուսների համար բնութագրական է մեքենաների 24-48 և 48 ժամ և ավելի միջակայքով շարժվելու հանգամանքը՝ կազմելով ընդամենի 74.1 տոկոսը (համապատասխանաբար 35.4 տոկոս և 38.7 տոկոս):

Գծապատկեր 28. Ավտոբուսային երթուղիների բաշխումը ըստ շարժման միջին միջակայքի շրջաններով (տոկոսով ընդամենի նկատմամբ)




Ուշագրավ է այն, որ ի տարբերություն միկրոավտոբուսների, ավտոբուսների պարագայում երթուղիների երկարությունը պայմանավորված չէ շարժման միջակայքի հետ, ինչը թերևս կարելի է բացատրել այն հանգամանքով, որ ավտոբուսային երթուղիները ոչ այնքան շատ են, որքան միկրոավտոբուսայինը: Համաձայն դիտարկման արդյունքների՝ 24-48 ժամ միջակայքով շարժվող մեքենաներ ունեցող երթուղիներ եղել են բոլոր շրջաններում, բացի ք.Ստեփանակերտից և Շահումյանի շրջանից: Ի հակառակ դրա՝ միայն Ստեփանակերտ քաղաքում և Ասկերանի շրջանում են եղել մինչև 1 ժամ միջակայքով

շարժվող ավտոբուսային երթուղիներ (հավելված 2, աղյուսակներ 22, 23 և 24):

Ավտոբուսային երթուղիների քանակի բաշխումն ըստ երթուղու երկարության և շարժման միջին միջակայքի արտացոլված է ստորև բերված գծապատկեր 29-ում:


Գծապատկեր 29. Ավտոբուսային երթուղիների քանակի բաշխումն ըստ երթուղու երկարության և շարժման միջին միջակայքի



6.6 ԿԱՏԱՐՎԱԾ ԵՐԹՈՒՂԻՆԵՐԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հետազոտությամբ խնդիր էր դրվել նաև ուսումնասիրել երթուղիները ըստ հաղորդակցության տեսակների: Ըստ հաղորդակցության տեսակների երթուղիների դիտարկումը վկայում է, որ գերակայող են միջըրջանային երթուղիները, որոնք կազմել են ընդամենի 58.9 տոկոսը: Նշված ցուցանիշի բարձր տեսակարար կշիռ է գրանցվել բոլոր շրջաններում՝ Ասկերանի (77.8 տոկոս), Մարտունու (76.5 տոկոս), Շուշիի (75.0 տոկոս), Մարտակերտի (72.2 տոկոս), Հաղրուքի (70.0 տոկոս) և Շահումյանի (50.0 տոկոս) շրջաններում: Ստեփանակերտ քաղաքում և Քաշաթաղի շրջանում նշված ցուցանիշը կազմել է ընդամենի համապատասխանաբար 33.3 և 27.3 տոկոսը (հավելված 3, աղյուսակներ 1.2.3):

Գծապատկեր 30. Երթուղիների բաշխումը ըստ հաղորդակցության տեսակների (տոկոսներով ընդամենի նկատմամբ)




Ներքաղաքային երթուղիները, որոնք կազմում են ընդամենի 13.1 տոկոսը, գրանցվել են Ստեփանակերտ, Շուշի և Բերձոր քաղաքներում, ընդ որում Ստեփանակերտ քաղաքում այն կազմել է Ստեփանակերտ քաղաքի բոլոր երթուղիների 40.8 տոկոսը, Շուշիի շրջանում 25.0 տոկոսը, իսկ Քաշաթաղի շրջանում՝ 18.1 տոկոսը:

Հետազոտությամբ ներշրջանային երթուղիներ արձանագրվել են Ասկերանի, Հաղրուքի, Մարտակերտի, Մարտունու և Քաշաթաղի շրջաններում, որոնք կազմում են ներշրջանային երթուղիների ընդամենի համապատասխանաբար՝ 27.3, 9.0, 9.0, 27.3 և 27.3 տոկոսը :

Միջպետական երթուղիների թիվը կազմել է 19, Ստեփանակերտ քաղաքին բաժին է ընկնում ընդամենի 36.8 տոկոսը, Մարտակերտի շրջանին՝ 21.0 տոկոսը, Քաշաթաղի շրջանին՝ 15.8 տոկոսը, Հաղրուքի շրջանին՝ 10.5 տոկոսը, Ասկերանի , Մարտունու և Շահումյանի շրջաններին՝ 5.3-ական տոկոսը : Շուշիի շրջանում դրանք բացակայում են:

Երթուղիների քանակի բաշխումը ըստ հաղորդակցության տեսակների արտացոլված է ստորև բերված գծապատկեր 31-ում:

Գծապատկեր 31. Երթուղիների քանակի բաշխումը ըստ հաղորդակցության տեսակների և շրջանների (տոկոսներով շրջանի ընդամենի նկատմամբ)




Հետազոտության արդյունքները հնարավորություն են տվել ուսումնասիրել նաև երթուղիների երկարությունները:

Հարկ է նկատել, որ եթե Ստեփանակերտ քաղաքում և Շուշիի շրջանում երթուղիների համար առավել բնութագրական են եղել մինչև 15.0 կմ երկարություն ունեցող երթուղիները ու ներքաղաքային տեսակը, ապա Ասկերանի և Մարտունու շրջաններում առավել բնութագրական են եղել 15.1-45.0 կմ, Հաղրուքի և Մարտակերտի շրջաններում 45.1-75.0 կմ, բոլոր նշված շրջանների համար՝ նաև միջշրջանային տեսակը: Քաշաթաղի շրջանում գերակայում է 105.1 կմ և ավելի երկարությամբ միջպետական երթուղիները:

Միջպետական երթուղիների համար առավել բնութագրական են եղել 105.1 կմ և ավել երկարություն ունեցող երթուղիները (հավելված 3 աղյուսակներ 4.5.6):

Երթուղիների քանակի բաշխումն ըստ երթուղու երկարության և հաղորդակցության տեսակների արտացոլված է ստորև բերված գծապատկեր 32-ում:

Գծապատկեր 32. Երթուղիների քանակի բաշխումը ըստ երթուղու երկարության և հաղորդակցության տեսակների



6.7 ՈՒՂԵՎՈՐԱՓՈՆԱԳՐՈՒՄՆԵՐ ԵՎ ՈՒՂԵՎՈՐԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտության կարևոր ձեռքբերումներից մեկը կարելի է համարել պաշտոնական վիճակագրական լրահաշվարկների համար հիմնավոր գործակիցների ստացումը: Վերջիններս հաշվարկվել են ուղևորափոխադրումների և ուղևորաշրջանառության վերաբերյալ կազմակերպությունների կողմից ներկայացվող ցուցանիշների և յուրաքանչյուր երթուղում կատարված դիտարկումների համադրման արդյունքում: Ըստ այդմ, ստորև ներկայացված՝ ուղևորափոխադրումների և ուղևորաշրջանառության հաշվարկների համար հիմք են ընդունվել՝ կազմակերպությունների մասով՝ լրացված հարցաթերթերի համապատասխան տվյալները, իսկ անհատական հարցաթերթի մասով՝ յուրաքանչյուր առանձին երթուղում դիտարկման ժամանակ գործող փաստացի մեքենաների թիվը, փոխադրված ուղևորների թիվը, երթուղու երկարությունը և երթերի թիվը:

Համաձայն ստացված արդյունքների՝ ուղևորափոխադրումների ամսական ծավալը հանրապետության համար կազմել է 1060.2 հազար մարդ, այդ թվում Ստեփանակերտ քաղաքի ցուցանիշը՝ 945.6 հազար մարդ:

Հանրապետությունում իրականացված ուղևորափոխադրումների ընդհանուր ծավալում բարձր է Ստեփանակերտ քաղաքի տեսակարար կշիռը՝ 89.2 տոկոս: Ուղևորափոխադրումների ընդհանուր ծավալում, տեսակարար կշռի առումով, Ստեփանակերտ քաղաքին հաջորդում են Ասկերանի(4.9 տոկոս), Շուշիի(2.3 տոկոս), Մարտակերտի (1.2 տոկոս), Մարտունու (1.1 տոկոս), Քաշաթաղի (0.8 տոկոս), Հադրութի (0.4 տոկոս) և Շահումյանի (0.1 տոկոս) շրջանները:

Համադրելով դիտարկումների արդյունքներով ստացված ուղևորափոխադրումների ցուցանիշը տնտեսավարող սուբյեկտների կողմից սույն հետազոտության շրջանակում լրացված հարցաթերթերի տվյալների հետ կարելի է նշել, որ ընդհանուր առմամբ, երթուղիների դիտարկման արդյունքներով ստացված ուղևորափոխադրումների ցուցանիշը, տնտեսավարող սուբյեկտների կողմից ներկայացված նույն ցուցանիշը գերազանցել է 1.7 անգամ: Տարածքային կտրվածքով դիտարկելիս, հաշվարկված գործակիցներն ունեցել են

տարբեր արժեքները և տատանվել են 1.5-ից (Շուշիի շրջան) 40.5-ի (Քաշաթաղի շրջան) սահմաններում:

Համաձայն ստորև բերված աղյուսակի՝ ուղևորափոխադրումների գործակիցները կազմել են՝ Ստեփանակերտ քաղաքում՝ 1.6, շրջաններում՝ 1.7:

Ստացված արդյունքները ներկայացված են ստորև բերված աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Ուղևորափոխադրումների ծավալը և համապատասխան գործակիցները ըստ շրջանների

Շրջաններ	Ըստ անհատական հարցաթերթերի տվյալների, <i>հազար մարդ</i>	Ըստ կազմակերպությունների կողմից լրացված հարցաթերթերի տվյալների, <i>հազար մարդ</i>	Գործակիցը
Ընդամենը	1060.2	639.8	1.7
Ստեփանակերտ	945.6	573.3	1.6
Ասկերան	52.4	32.7	1.6
Հաղրուք	4.5	2.6	1.7
Մարտակերտ	13.1	7.3	1.8
Մարտունի	12.0	7.2	1.7
Շահումյան	0.6	0.1	6.0
Շուշի	23.9	16.4	1.5
Քաշաթաղ	8.1	0.2	40.5

1.7

